

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

2010թ. հունվար-հունիսին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 49459.1 մլն դրամ՝ 2009թ. հունվար-հունիսի 42791.1 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 4.8 տոկոս, ինդեքս-դեֆլյատորը՝ 10.3 տոկոս: 2010թ. հունվար-հունիսին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 347.1 հազ. դրամ, 903.4 ԱՄՆ դոլար կամ 679.8 Եվրո՝ 2009թ. հունվար-հունիսի 304.0 հազ. դրամի, 873.5 ԱՄՆ դոլարի, 655.1 Եվրոյի դիմաց:

Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

	2009թ. հունվար- հունիս	2010թ. հունվար- հունիս	իրական հավելաճի տեմպը (տոկոսներով)	/ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/	
				ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով)	
				2009թ. հունվար- հունիս	2010թ. հունվար- հունիս
Համախառն ներքին արդյունք	42791.1	49459.1	4.8	100.0	100.0
Ապրանքների արտադրություն այդ թվում՝	15341.9	18264.4	0.7	35.8	37.0
Արդյունաբերություն	6529.1	8745.4	0.7	15.2	17.7
Անտառային տնտեսություն	56.8	73.1	19.3	0.1	0.2
Գյուղատնտեսություն	3714.1	3742.4	-6.1	8.7	7.6
Շինարարություն	5041.9	5703.5	5.4	11.8	11.5
Ծառայությունների արտադրություն այդ թվում՝	25635.8	29390.4	8.6	59.9	59.4
Շուկայական ծառայություններ որից՝	11599.2	14300.7	13.1	27.1	28.9
Տրանսպորտ և կապ	3345.8	3669.1	10.3	7.8	7.4
Առևտուր և հանրային սնունդ	2710.6	2785.6	-3.8	6.3	5.6
Ոչ շուկայական ծառայություններ	14036.6	15089.7	4.9	32.8	30.5
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)*	1428.5	2210.7	35.1	3.3	4.5
Ապրանքների և ներմուծման գուտ հարկեր	3241.9	4015.0	8.3	7.6	8.1

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 0.7 և 8.6 տոկոս:

ՀՆԱ-ի արձանագրված 4.8 տոկոս հավելաճի տեմպի 2.7 տոկոսային կետն ապահովել է ֆինանսներ և վարկը, 1.2-ը՝ կառավարում և պաշտպանությունը, 0.8-ը՝ տրանսպորտ և կապը:

Կառուցվածքային տեսանկյունից՝ 2010թ. հունվար-հունիսին նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ աճել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 1.2 տոկոսային կետով, ապրանքների գուտ հարկերի տեսակարար կշիռը՝ 0.5 տոկոսային կետով: Ի հակառակ դրա, 0.5 տոկոսային կետով նվազել է ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը:

* Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Քանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով: